ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Բագրատ Սերգեյի Բագրատյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Արդի աշխարհակարգում Հայաստանի Հանրապետությունը ձգտում է հավասարակշռել իր հարաբերությունները հարևան երկրների, տարածաշրջանային տերությունների և միջազգային դերակատարների հետ՝ միաժամանակ հետապնդելով սեփական ազգային շահերը և անվտանգային նպատակները: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետությունը մշակում և իրականացնում է իր անվտանգության քաղաքականությունը, որն ունի բազմակողմանի բնույթ և ընդգրկում է տարբեր ոլորտներ ու մակարդակներ: Ազգային անվտանգության ապահովումը անվտանգային քաղաքականության հիմնարար խնդիրն է, որը հետամուտ է այնպիսի նպատակների իրականացմանը, ինչպիսիք են՝ ոչ միայն ազգի գոյապահպանության, պետականության, հասարակական-քաղաքական կյանքի ամրապնդման ու զարգացման դեմ ուղղված սպառնալիքներից պաշտպանություն, այլ նաև դրանք կանխարգելող միասնական ու համակարգված կառուցակարգերի նախատեսում և իրագործում:

Հաշվի առնելով վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, ծավալվող անվտանգության և ռազմաքաղաքական փոփոխությունները՝ ներկայումս օրակարգային հիմնախնդիր է՝ վերանայել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը՝ երկրի ազգային անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների, սպառնալիքների ու առաջնայնությունների ճշգրտման նպատակով: Նոր, լրամշակված ռազմավարությունը պետք է համահունչ լինի և արտացոլի ՀՀ քաղաքական-իրավական ու

կառավարչական կառուցակարգերում ազգային անվտանգության համակարգի արդիական պահանջները, ինչից ելնելով էլ հաջորդ փուլերով կվերանայվեն նաև անվտանգության ենթաոլորտներին վերաբերող հայեցակարգերը: Վերոնշյալ հիմնարար հարցերի և ուղղությունների համապարփակ ուսումնասիրությամբ էլ պայմանավորված է Բագրատ Բագրատյանի ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակով և խնդիրներով է պայմանավորված ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը ձևավորված է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրահանգումներից և առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից: Բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությունում դրված գիտահետազոտական նպատակներին: Ներածական մասում հիմնավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ձևակերպված են գիտական արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ազգային անվտանգության քաղաքականության և դրա իրականացման տեսական-մեթոդաբանական հիմնահարցերը» գլխում, ատենախոսը արդարացիորեն ընդգծում է, որ անվտանգության քաղաքականության հիմնարար խնդիրն է ազգային անվտանգության երաշխավորումը, որի առաջնային նպատակը պետք է լինի ոչ միայն ազգի գոյապահպանության, պետականության, հասարակական-քաղաքական կյանքի ամրապնդման, զարգացման դեմ ուղղված առկա սպառնալիքներից պաշտպանությունը, այլև նախատեսի դրանք կանխարգելող միասնական ու համակարգված կառուցակարգեր: Ավելին, թե՛ ազգային անվտանգությունը, թե՛ դրա ապահովմանն ուղղված քաղաքականությունը կրում են բազմամակարդակ բնույթ՝ դրանով հանդերձ պահանջելով ինչպես ամբողջական իշխանական, այնպես էլ հասարակական ու անհատական կարողությունների համախմբում:

Այս գլխում Բ.Բագրատյանը կարևորում է այն, որ ազգային շահերի արդյունավետ քաղաքականություն մշակելիս քաղաքական որոշումներ կայացնողները պետք է պատասխանեն բազմաթիվ առանցքային հարցադրումների, որոնք ազդում են

ազգային շահի կոնկրետ տիպի ընտրության և ձևակերպման յուրահատկությունների վրա. մասնավորապես՝ ինչպե՞ս կանդրադառնան պետության հզորության վրա ընթացիկ ներպետական և արտաքին զարգացումները, արդյոք հակառակորդ ուժերն ունա՞կ են վնասելու պետության կենսական շահերին, արդյոք պետությունը տիրապետո՞ւմ է բավարար ուժի՝ պաշտպանելու սեփական կենսական շահերը, ո՞ր շահերն են կենսական, որո՞նք՝ երկրորդական, պետության հզորության ներուժի ո՞ր մասն է նա պատրաստ օգտագործելու շահերի պաշտպանության համար և այլն:

Ատենախոսության երկրորդ՝ «Ազգային անվտանգության քաղաքականության հենքային երաշխավորումը Հայաստանի Հանրապետությունում» գլխում նշվում է, որ ազգային անվտանգության քաղաքականության համար կարևոր նշանակություն ունի նորմատիվ, իրավական-քաղաքական հենքի ապահովումը՝ փոխհամաձայնեցված և փոխկապակցված նորմատիվային՝ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի համակցությամբ: Նորմատիվային ամրագրմամբ սահմանվում են այն իրավական նորմերը և սկզբունքները, որոնք ուղղված են ազգային անվտանգության ապահովման բնագավառում իրավահարաբերությունների կարգավորմանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքականության արտաքին բաղադրիչը, հիմնված լինելով ներպետական իրավական ակտերում նորմատիվային արտացոլում ստացած համապատասխան միջազգային իրավական նորմերի ու պետության միջազգային պայմանագրերի և արտաքին քաղաքականության հայեցակարգի վրա, կապված է բնակչության, պետության ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության, հնարավոր արտաքին ագրեսիայի կանխման և հետմղման, ինչպես նաև պետության սահմաններից դուրս ազգային շահերով պայմանավորված անվտանգային նպատակների իրականացման հետ:

Երրորդ՝ «Ազգային անվտանգության քաղաքականության ռազմավարական երաշխավորման ներպետական համակարգը» վերտառությամբ գլխում Հայաստանի Հանրապետության օրինակով վերլուծվում են ազգային անվտանգության քաղաքականության ներպետական կառուցակարգերի համակողմանիությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև հետազոտվում է անվտանգության խորհրդի դերը ազգային անվտանգության ապահովման գործում: Արտասահմանյան երկրների անվտանգության համակարգող վերգերատեսչական մարմինների կարգավիճակի

գնահատումը, կազմակերպական-կառուցվածքային և գորառութային վերլուծությունը, ստեղծման պատմությունը, կառուցվածքը, խնդիրները և իրավասությունները ինչպես գործնական տեսանկյունից, այնպես էլ գիտական առումով բավականին արժեք են ներկայացնում և հնարավորություն ընձեռում նաև ՀՀ-ում կիրառելու դրանց դրական փորձի տարրեր:

Ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները, կատարվել են հայեցակարգային բնույթի եզրահանգումներ ու ընդհանրացումներ, դրանց հիման վրա ներկայացվել են նաև հիմնավորված առաջարկներ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, այն հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Սեղմագիրը լիովին համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է նրա հիմնական դրույթների նույնական արտացոլումը: Բագրատ Բագրատյանի կողմից հրապարակված թվով ութ գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Բարձր գնահատելով գրախոսվող աշխատանքը և նկատի ունենալով թեմայի արդիականությունն ու բազմաշերտությունը՝ հարկ եմ համարում կատարել մի շարք դիտարկումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ատենախոսության առանձին հարցադրումների հետ.

1. Ատենախոսության առաջին գլխի առաջին ենթագլուխը փաստացի կրում է տեսամեթոդական բնույթ, հետևապես, ավելի ճիշտ կլիներ դրանում անդրադարձ կատարել արտասահմանյան անվտանգային հայտնի տեսությունների ու դպրոցների, դրանցում գնահատվող ինստիտուցիոնալ տարրերի համեմատական վերլուծություններին: Նման մոտեցմամբ հնարավոր կլիներ առավել համընդգրկուն բացահայտել անվտանգության բովանդակային շրջանակները և կիրառական հնարավորությունները Հայաստանում իրականացվող փոփոխությունների համատեքստում:

2. Աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետությունում անվտանգության քաղաքականության իրավաքաղաքական ու հայեցարակգային համապափակ զարգացումներին: Կարծում եմ, այստեղ հարկ էր հատուկ կարևորել և նախանշել 2026 թվականին Հայաստանում սպասվող

սահմանադրական բարեփոխումների գործընթացում անվտանգային հիմնադրույթները, քանզի նոր սահմանադրությունը անփուսափելիորեն բացելու է ազգային անվտանգության ռազմավարական երաշխավորվածության նոր իրողություններ ու պահանջներ:

3. Կարևորելով երրորդ գլխում ներկայացված հետազոտությունները, ինչպես նաև որոշակիորեն շարունակելով նախորդ կետում նշված դիտարկումը՝ գտնում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե ազգային անվտանգության համատեքստում առանձնացված վերլուծվեին Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական հնարավոր ճգնաժամին (կամ դրան մոտիկ դրսևորումներին), քաղաքական կուսակցությունների գաղափարական ու վարծագծային դրսևորումներին, կառավարման էլիտաների արձագանքներին վերաբերող հիմնահարցերը:

4. Ատենախոսության մեջ հանդիպում են ձևակերպական և ոճաբանական, տեխնիկական բնույթի անճշտություններ: Աշխատանքի ընթերցման ու բովանդակային առավել մատչելիության տեսակետից կարելի էր նաև առանձին ներկայացնել դրանում օգտագործված հասկացությունների, հապավումների բացազատումները, ինչպես նաև որոշ տեղեկատվություն տալը առանձին հավելվածով:

Վերոհիշյալ նկատառումները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին առավել խորը բացահայտելու Հայաստանի Հանրապետության անվտանգության քաղաքականության բազմաշերտությունը և դրա երաշխավորման գործում ռազմավարական զարգացման հնարավորությունների ամբողջությունը:

Այդուհանդերձ, Բագրատ Բագրատյանն իր առջև դրված խնդիրներն ու նպատակները կատարել է լիովին: Ատենախոսությունում առկա եզրակացություններն ու առաջարկություններն ունեն կարևոր տեսական և գործնական նշանակություն: Հետազոտությունն աչքի է ընկնում գիտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու բարձրացված հիմնախնդիրների վերաբերյալ կատարված ծավալուն աշխատանքները, հենքային գնաատումները և վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ Բագրատ Սերգեյի Բագրատյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության

քաղաքականության հայեցակարգային ապահովումը. հիմնախնդիրներ և զարգացման հնարավորություններ» թեմայով ատենախոսությունը ամբողջությամբ բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է հայցվող մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր,
քաղաքական գիտությունների դոկտոր **Գարիկ Միշայի Քեռյան**

Պաշտոնական ընդդիմախոսի (պրոֆեսոր Գարիկ Միշայի Քեռյանի) ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Մ. Վ. Հովհաննիսյան**
(կազմակերպության գիտ. քարտուղար)

(ստորագրություն և կնիք)

30. 01. 2026թ.